Լոռու մարզում հայտնաբերվել է Փաստաբանների պալատի 49-ամյա անդամի դիակը՝ բռնության հետքերով

19.11.2012 08:33

Երեկ երեկոյան, ժամը 22.45-ին, «շտապօգնության» կայանից ոստիկանության Գուգարքի բաժնում հաղորդում է ստացվել, որ Լոռու մարզի Շահումյան գյուղում գործող ռեստորանում բռնության հետքերով դիակ կա: Այս մասին տեղեկանում ենք Ոստիկանության լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչության տարածած հաղորդագրությունից:

Մեկնած օպերատիվ խումբը նշված վայրում հայտնաբերել է Երևան քաղաքի բնակիչ, ՀՀ Փաստաբանների պալատի անդամ, 49-ամյա Սամվել Շարբաթյանի դիակը՝ բռնության հետքերով:

Նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն: Փաստի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ: Կատարվում է նախաքննություն:

Աղբյուրը՝ http://tert.am

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })